ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ. Ախուրյան, (0312) 70885 , 091 420 451 akhuryan.shirak@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

22 հոկտեմբերի 2020 թվականի թիվ 112

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 7 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2020 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 7 նիստի հետևյալ օրակարգը.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայքում 2020 թվականի երրորդ եռամսյակում իրականացված իրավական հսկողության արդյունքներ ի մասին
   /զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավար Ա.Իգիթյան/
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 2-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին
   /զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավար Ա.Իգիթյան/
3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 105-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
   /զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավար Ա.Իգիթյան/
4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքում տեղական տուրքեր և վճար վճարողների գրանցամատյանները վարելու կարգը սահմանելու մասին
   /զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավար Ա.Իգիթյան/
5. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման կանոնները սահմանելու մասին

/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավար Ա.Իգիթյան/

6. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության իրականացման թույլատելի վայրերը, պահանջները և պայմանները սահմանելու մասին
/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավար Ա.Իգիթյան/
7. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի վարչական տարածքում առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող անձանց կողմից լռությունը կամ գիշերային անդորրն ապահովելու ժամեր սահմանելու մասին
/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավար Ա.Իգիթյան/
8. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի վարչական տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների տեղակայմանը /հեռավորությանը/ներկայացվող պահանջներ ըսահմանելու մասին
/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավար Ա.Իգիթյան/
9. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի վարչական տարածքում գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները սահմանելու մասին
/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավար Ա.Իգիթյան/
10. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրամցման Ախուրյանի տարածքային բաժնի կանոնադրությունը հաստատելու մասին
/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավար Ա.Իգիթյան/
11. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 18 որոշման մեջ լրացում կատարելու մասին
/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավար Ա.Իգիթյան/

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԲՈՒՋՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ

ԴՐՄԵՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ կողմակցվեց 27.09.2020թ

ՀԱՄԻԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՄԱԹՈՍՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄՆԱՑՅԱՆ ՄՀԵՐ

ՄՔՈՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԳԵՂԱՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ**

2020թ. հոկտեմբերի 22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ. Ախուրյան, (0312) 70885 , 091 420 451 akhuryan.shirak@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

22 հոկտեմբերի 2020 թվականի թիվ 113

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 37-րդ կետի դրույթով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2020թվականի սեպտեմբերի 4-ի թիվ 01 //09624-2020 գրությամբ ներկայացված առաջարկությունները՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացան նկատմամբ 2020 թվականի օգոստոսի 10-ից 21-ը իրականացված իրավական հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումները վերացնելու ուղղությամբ.
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացան նկատմամբ իրականացված իրավական հսկողության արդյունքների վերաբերյալ կազմված 2020 թվականի օգոստոսի 28-ի թիվ ԻՀ 6 արձանագրությունում նշված խախտումներն ամբողջությամբ ընդունել ի գիտութուն:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացան նկատմամբ իրականացված իրավական հսկողության արդյունքների վերաբերյալ կազմված 2020 թվականի օգոստոսի 28-ի թիվ ԻՀ 6 արձանագրությունում նշված խախտումները վերացնելու վերաբերյալ միջոցառումների ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:
3. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավար Արծրունի Իգիթյանին.
   սույն որոշմամբ հաստատված միջոցառումների ժամանակացույցին համապատասխան միջոցներ ձեռնարկել համայնքում իրականացված իրավական հսկողության

արդյունքում արձանագրված խախտումներն ամբողջությամբ և սահմանված ժամկետներում վերացնելու, հետագայում այդպիսիք բացառելու ուղղությամբ:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավար Արծրունի Իգիթյանի վրա:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԲՈՒՋՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ

ԴՐՄԵՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ Կողմակցել է 27.09.2020թ

ՀԱՄԻԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՄԱԹՈՍՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄՆԱՑՅԱՆ ՄՀԵՐ

ՄՔՈՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԳԵՂԱՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ**

2020թ. հոկտեմբերի 22

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 113 ՈՐՈՇՄԱՆ

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ույց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐԱՅՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԱՏՄԱՄԲ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 10-Ից ՕԳՈՍՏՈՍԻ 21-Ը ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱԶՄՎԱԾ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 28-Ի ԹԻՎ ԻՀ 6 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑԱՑՎԱԾ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Միջոցառման բովանդակությունը	կատարման ժամկետը	կատարման պատասխանատուն	կատարված և կատարվելիք աշխատանքների մասին
1	2	3	
1.<<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ պարբերության համաձայն կանոնակարգում կատարել համապատասխան լրացում՝ մշակել և համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնել համայնքի բյուջեում փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու ընթացակարգի սահմանում՝ <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի և <<ՀՀ բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի համաձայն:	Մինչև 2020 թվական սեպտեմբերի 24-ը	Ախուրյան համայնքի ղեկավար՝ Ա. Իգիթյան	Հաստատվել է Ախուրյան համայնքի ավագանու 2020 թվականի սոպտոմբերի 22-ի թիվ 50 որոշմամբ
2. <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 83-րդ հոդվածի 2-րդ մասի և <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունն համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնել ավագանու անդամի (անդամների) կամ աուդիտորական մասնագիտացված կազմակերպության եզրակացության առկայությամբ մինչև ընթացիկ տարվա մարտի 20-ը:	Մշտապես	Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Հ.Խաչատրյան	
3.«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն համայնքի ավագանու կողմից իրականացնել համայնքի բյուջեի կատարման և համայնքի ստացած վարկերի ու այլ ներգրավված ֆինանսական միջոցների օգտագործման նկատմամբ վերահսկման իրականացում	Մշտապես	Ախուրյան համայնքի ղեկավար՝ Ա. Իգիթյան	
4. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն համայնքի ավագանու կողմից ընդունել որոշում՝ համայնքի ավագանու անդամի (անդամների) կամ աուդիտորական մասնագիտացված կազմակերպության միջոցով բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու վերաբերյալ ավագանու որոշած պարբերականությամբ, բայց ոչ պակաս, քան տարին մեկ անգամ:	Մշտապես	Ախուրյան համայնքի ղեկավար՝ Ա. Իգիթյան	
5. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն համայնքների բյուջեների կատարման նկատմամբ վերահսկողության հիմնական խնդիրները	Մշտապես	Ախուրյան համայնքի ղեկավար՝	

իրականացնել իր անդամի (անդամների) և (կամ) աուդիտորական մասնագիտացված կազմակերպության միջոցով:		Ա. Իգիթյան	
6. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի ա) կետի համաձայն բյուջետային մուտքերի կանխատեսումների և բյուջետային ելքերի նախահաշիվները կազմելու հիմնավորվածության ստուգումը իրականացնել իր անդամի (անդամների) և (կամ) աուդիտորական մասնագիտացված կազմակերպության միջոցով:	Մշտապես	Ախուրյան համայնքի ղեկավար՝ Ա. Իգիթյան	
7. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի բ) կետի համաձայն բյուջետային միջոցների, ներառյալ՝ վարկերի և ներգրավված այլ փոխառու միջոցների ծախսման օրինականության ստուգումը իրականացնել իր անդամի (անդամների) և (կամ) աուդիտորական մասնագիտացված կազմակերպության միջոցով:	Մշտապես	Ախուրյան համայնքի ղեկավար՝ Ա. Իգիթյան	
8. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի գ) կետի համաձայն բյուջետային պարտավորությունների կատարման, հաստիքանախահաշվային կարգապահության պահպանման, հաշվապահական հաշվառման և հաշվետվության վիճակի գնահատումը իրականացնել իր անդամի (անդամների) և (կամ) աուդիտորական մասնագիտացված կազմակերպության միջոցով:	Մշտապես	Ախուրյան համայնքի ղեկավար՝ Ա. Իգիթյան	
9. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի դ) կետի համաձայն բյուջետային հիմնարկների և կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ վերահսկողության սահմանումը իրականացնել իր անդամի (անդամների) և (կամ) աուդիտորական մասնագիտացված կազմակերպության միջոցով:	Մշտապես	Ախուրյան համայնքի ղեկավար՝ Ա. Իգիթյան	
10. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի ե) կետի պահանջը, համաձայն յուջետային գործընթացի նկատմամբ օրենքով սահմանված այլ պահանջների կատարման ապահովումը իրականացնել իր անդամի (անդամների) և (կամ) աուդիտորական մասնագիտացված կազմակերպության միջոցով:	Մշտապես	Ախուրյան համայնքի ղեկավար՝ Ա. Իգիթյան	
11. «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն ընդունել ավագանու որոշում՝ տեղական տուրք և (կամ) վճար վճարողների հաշվառում իրականացնելու ու գրանցամատյաններ վարելու կարգի վերաբերյալ:	Մինչև 2020 թվական սեպտեմբերի 24-ը	Ախուրյան համայնքի ղեկավար՝ Ա. Իգիթյան	Հաստատվել է Ախուրյան համայնքի ավագանու 2020 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 116 որոշմամբ
12<<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն համայնքի ավագանու կողմից թույլտվությունների համար վճարների դրույքաչափերի սահմանում, սակայն ոչ ավել, քան համապատասխան աղբահանության վճար վճարողի կողմից <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> օրենքի 14-րդ հոդվածով նախատեսված հաշվարկվելիք դրույքաչափերի 20 տոկոսը.	Մինչև 2020 թվական սեպտեմբերի 24-ը	Ախուրյան համայնքի ղեկավար՝ Ա. Իգիթյան	Հաստատվել է Ախուրյան համայնքի ավագանու 2020 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 115որոշմամբ

13.«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 40-րդ կետի, <<Առևտրի և ծառայությունների մասին>> ՀՀ օրենքի պահանջների համաձայն համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները սահմանելու վերաբերյալ ավագանու որոշման (որոշումների) առկայություն:	Մինչև 2020 թվական սեպտեմբերի 24-ը	Ախուրյան համայնքի ղեկավար՝ Ա. Իգիթյան	Հաստատվել է Ախուրյան համայնքի ավագանու 2020 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 117 որոշմամբ
14. <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41.1-րդ կետի համաձայն իրավասու մարմինների հետ քննարկել համայնքի տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության իրականացման թույլատրելի վայրերը, պահանջները և պայմանները սահմանելու հարցը:	Մինչև 2020 թվական սեպտեմբերի 24-ը	Ախուրյան համայնքի ղեկավար՝ Ա. Իգիթյան	Հաստատվել է Ախուրյան համայնքի ավագանու 2020 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 118 որոշմամբ
15. <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41.2-րդ կետի, <<Առևտրի և ծառայությունների մասին>> ՀՀ օրենքի 15.3-րդ հոդվածի 3-րդ մասի համայնքի ավագանու որոշմամբ սահմանել սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների տեղակայմանը (հեռավորությանը) ներկայացվող պահանջները:	Մինչև 2020 թվական սեպտեմբերի 24-ը	Ախուրյան համայնքի ղեկավար՝ Ա. Իգիթյան	Հաստատվել է Ախուրյան համայնքի ավագանու 2020 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 120 որոշմամբ
16. <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 40.1-րդ կետի համաձայն համայնքի ավագանու որոշմամբ սահմանել առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող օբյեկտներում, ըստ դրանց գտնվելու վայրերի, առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող անձանց կողմից լռությունը կամ գիշերային անդորրն ապահովելու ժամերը (22.00-ից մինչև 7.00-ն, 23.00-ից մինչև 7.00-ն և 24.00-ից մինչև 7.00-ն).	Մինչև 2020 թվական սեպտեմբերի 24-ը	Ախուրյան համայնքի ղեկավար՝ Ա. Իգիթյան	Հաստատվել է Ախուրյան համայնքի ավագանու 2020 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 119 որոշմամբ
17. <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41-րդ կետի համաձայն համայնքի ավագանու որոշմամբ սահմանել համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները:	Մինչև 2020 թվական սեպտեմբերի 24-ը	Ախուրյան համայնքի ղեկավար՝ Ա. Իգիթյան	Հաստատվել է Ախուրյան համայնքի ավագանու 2020 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 121որոշմամբ
18. <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն ապահովել ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների առաքումը համապատասխան մարզպետարան՝ յոթնօրյա ժամկետում.	Մշտապես	Ախուրյան համայնքի ղեկավար Ա.Իգիթյան, համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար	Ընդունվել է ի գիտություն
19. <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն նորմատիվ իրավական ակտեր ընդունելուց հետո երկօրյա ժամկետում ուղարկել համայնքի ավագանու անդամներին և փակցնել համայնքի ավագանու նստավայրում՝ բոլորի համար տեսանելի ու մատչելի տեղում: (Պաշտոնական համացանցային կայք ունեցող համայնքներում սույն կետով նախատեսված նորմատիվ ակտերը երկօրյա ժամկետում տեղադրել կայքում.).	Մշտապես	Ախուրյան համայնքի ղեկավար Ա.Իգիթյան, համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար	Ընդունվել է ի գիտություն
20. <<Տեղական ինքնակառավարման մասին>>ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն հաշվառել ավագանու անդամների նիստերին և քվեարկություններին մասնակցությունը և ավագանու նիստերի արձանագրություններում համապատասխան նշումներ կատարել նիստից ավագանու անդամի բացակայության պատճառի մասին (հարգելի, անհարգելի) և եռամսյակը մեկ անգամ ավագանու անդամներին տեղեկանք տրամադրել	մշտապես	Ախուրյան համայնքի ղեկավար՝ Ա. Իգիթյան	

ավագանու անդամների նախորդ նիստերից կամ քվեարկություններից բացակայության մասին:			
21. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 10-րդ կետի համաձայն օրենքով, իրավական այլ ակտերով կամ աշխատակազմի կանոնադրությամբ նախատեսված իր լիազորությունների սահմաններում կամ գործառույթների շրջանակում նշանակում և ազատում է աշխատակազմի աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.	Մշտապես	Ախուրյան համայնքի ղեկավար Ա.Իգիթյան, համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար	Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մցույթները կայացել են: Համայնքային ծառայության և տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատակիցներին պաշտոններում նշանակումները կատարվել են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի կողմից:
22. <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն աշխատակազմի առանձնացված ստորաբաժանման կանոնադրությունը հաստատում է համայնքի ավագանին:	Մինչև 2020 թվական սեպտեմբերի 24-ը	Ախուրյան համայնքի ղեկավար՝ Ա. Իգիթյան	Հաստատվել է Ախուրյան համայնքի ավագանու 2020 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 122 որոշմամբ
23. <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն ույքագրում և վարում է համայնքի զբոսաշրջային ռեսուրսների (բնական, պատմամշակութային, մարդկային) գրանցամատյանը.	Մինչև 2020 թվական սեպտեմբերի 24-ը	Ախուրյան համայնքի ղեկավար՝ Ա. Իգիթյան	Հաստատվել է Ախուրյան համայնքի ղեկավարի 2020 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 214 որոշմամբ
24. <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն համայնքի ավագանու որոշմամբ համայնքում սահմանել և տրամադրել հատուկ կայանման և կանգառի վայրեր՝ զբոսաշրջիկների տրանսպորտային փոխադրամիջոցների համար:	Մինչև 2020 թվական սեպտեմբերի 24-ը	Ախուրյան համայնքի ղեկավար՝ Ա. Իգիթյան	Հաստատվել է Ախուրյան համայնքի ղեկավարի 2020 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 215 որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԻԳԻԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ. Ախուրյան, (0312) 70885 , 091 420 451 akhuryan.shirak@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

22 հոկտեմբերի 2020 թվականի թիվ 114

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-Ի ԹԻՎ 2-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ կետի հոդվածի 4-րդ մասի 2-րդ պարբերության և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի դրույթներով
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 2-Ն որոշման հավելվածում 32-րդ կետից հետո լրացնել նոր՝ 32.1 կետ.

32.1 **Բյուջեում փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու կարգը** .
Համայնքի բյուջեում փոփոխություններ և (կամ) լրացումներ կարող են կատարվել համայնքի ղեկավարի կամ համայնքի ավագանու անդամի (անդամների) առաջարկությամբ: Այդ փոփոխությունները և (կամ) լրացումները չեն կարող խախտել համայնքի բյուջեի հավասարակշռությունը:
Համայնքի ավագանու անդամների առաջարկած այն փոփոխությունները և (կամ) լրացումները, որոնք նվազեցնում են համայնքի բյուջեի մուտքերը կամ ավելացնում են ելքերը, համայնքի ավագանին քննարկում է միայն համայնքի ղեկավարի եզրակացության առկայությամբ և ընդունում ավագանու անդամների ընդհանուր թվի ձայների երկու երրորդով:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԲՈՒՋՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ

ԴՐՄԵՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ կողմակից է 27.09.2020թ

ՀԱՄԻԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՄԱԹՈՍՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄՆԱՑՅԱՆ ՄՀԵՐ

ՄՔՈՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԳԵՂԱՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ**

2020թ. հոկտեմբերի 22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ. Ախուրյան, (0312) 70885 , 091 420 451 akhuryan.shirak@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

22 հոկտեմբերի 2020 թվականի թիվ 115

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 13-Ը ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 105-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 40.1-րդ կետի, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 7-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 34-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 13-ը դեկտեմբերի 2019 թվականի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի վարչական տարածքում 2020 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 105-Ն որոշման թիվ 2՝ «Տեղական վճարների դրույքաչափեր» հավելվածի 8-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

Համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճարը մեկ տոննա աղբի համար չի կարող գերազանցել համապատասխան աղբահանության վճար վճարողի կողմից նախատեսված դրույքաչափի 20 %–ը՝ 2000 /երկու հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԲՈՒՋՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ

ԴՐՄԵՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ կողմակից է 27.09.2020թ

ՀԱՄԻԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՄԱԹՈՍՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄՆԱՑՅԱՆ ՄՀԵՐ

ՄՔՈՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԳԵՂԱՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ**

2020թ. հոկտեմբերի 22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ. Ախուրյան, (0312) 70885 , 091 420 451 akhuryan.shirak@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

22 հոկտեմբերի 2020 թվականի թիվ 116

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ ԵՎ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐԸ ՎԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Տեղական տուրքերի եվ վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի դրույթներով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքում տեղական տուրք և վճար վճարողների հաշվառման և գրանցամատյանների վարման կարգը:
2. Հաստատել.
   1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքում տեղական տուրք վճարողների գրանցամատյանի ձևը՝ համաձայն թիվ 1 հավելվածի
   2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքում տեղական վճար վճարողների գրանցամատյանի ձևը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:
3. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքում տեղական տուրք և վճար վճարողների գրանցամատյանները վարվում են փաստաթղթային և էլեկտրոնային տարբերակներով:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԲՈՒՋՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ

ԴՐՄԵՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ 27.09.2020թ

ՀԱՄԻԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՄԱԹՈՍՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄՆԱՑՅԱՆ ՄՀԵՐ

ՄՔՈՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԳԵՂԱՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ**

2020թ. հոկտեմբերի 22

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Ախուրյան համայնքի
ավագանու
2020 թվականի սեպտեմբերի 22-ի N 116 որոշման

ԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ ԵՎ (ԿԱՄ) ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքում (այսուհետ՝ Համայնք) տեղական տուրք և (կամ) վճար վճարողների հաշվառման, գրանցամատյանների վարման կարգը և գրանցամատյանների ձևերը:

2. Տեղական տուրք և (կամ) վճար վճարողների հաշվառումն իրականացվում է տեղական տուրք և (կամ) վճար վճարողների գրանցամատյաններում (այսուհետ՝ Գրանցամատյան), որոնք վարվում են ըստ տեղական տուրքերի և վճարների առանձին տեսակների:

3. Գրանցամատյանները դասակարգվում են՝

1) տեղական տուրք վճարող ֆիզիկական և իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի հաշվառման գրանցամատյաններ (Ձև 1),

2) տեղական վճար վճարող ֆիզիկական և իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի անձանց հաշվառման գրանցամատյաններ (Ձև 2),

4.Գրանցամատյանները կարող են լինել փաստաթղթային և /կամ/ էլեկտրոնային (համակարգչային ծրագրի կամ ինտերնետային կայքի տեսքով):

5. Գրանցամատյանները վարվում են Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) ֆինանսատնտեսական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնում (այսուհետ՝ Բաժին) բաժնի պետի պատասխանատվությամբ:

6. Գրանցամատյանները վարվում են ըստ տարիների:

7. Փաստաթղթային ձևով վարվող Գրանցամատյանները էջակալվում, կարվում և կնքվում են աշխատակազմի կնիքով:

8. Գրանցամատյաններում առնվազն պետք է ներառվեն հետևյալ տվյալները՝

1) գրանցամատյանի վարման սկիզբը,

2) տեղական տուրքի և (կամ) վճարի տեսակը,

3) գրանցամատյանը վարող աշխատակազմի Բաժնի անվանումը,

4) գրանցամատյանի վարման համար պատասխանատու անձի անունը, ազգանունը (ստորագրությունը),

5) տեղական տուրք և (կամ) վճար վճարողների գրանցման հերթական համարը,

6) համայնքի ղեկավարի որոշման համարը և ամսաթիվը, որի հիման վրա գանձվել է տուրք և (կամ) վճար (լրացվում է առկայության դեպքում),

7) տեղական տուրքի և (կամ) վճարի չափը,

8) ժամանակահատվածը, որի համար վճարվել է տեղական տուրք և (կամ) վճար:

9. Տեղական տուրք և (կամ) վճար վճարող ֆիզիկական անձանց դեպքում Գրանցամատյաններում (Ձև 1, Ձև 2) ներառվում են նաև՝

1) ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հայրանունը՝ լինելու դեպքում,

2) հաշվառման հասցեն,

3) անձը հաստատող փաստաթղթի տվյալները:

10. Տեղական տուրք և (կամ) վճար վճարող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի դեպքում գրանցամատյաններում (Ձև 1, Ձև 2) ներառվում են նաև՝

1) իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ անվանումը, կազմակերպաիրավական տեսակը,

2) գրանցման հասցեն,

3) գործունեության հասցեն,

4) իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցման համարը,

5) հարկ վճարողի հաշվառման համարը:

11. Բաժնում տվյալ տարվա համար փաստաթղթային ձևով վարված գրանցամատյանները ստորագրվում են բաժնի պետի կողմից և մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը հանձնվում են աշխատակազմի արխիվ:

12. Գրանցամատյաններ կարող են վարվել նաև այն համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում (ՀՈԱԿ), որտեղ գանձվում է տուրք և (կամ) վճար.

13. ՀՈԱԿ-ներում տվյալ տարվա համար փաստաթղթային ձևով վարվող գրանցամատյանները էջակալվում, կարվում և կնքվում են համայնքապետարանի աշխատակազմի կնիքով և մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը հանձնվում են աշխատակազմին:

14. Գրանցամատյանների Ձև 1-ը և Ձև 2-ը կցվում են:

Հավելված թիվ 2
ՀՀ Շիրակի մարզի
Ախուրյան համայնքի ավագանու
2020 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 116 որոշման

Աղ N2

ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ

Հ/Հ	Վճարողի			Տեղական վճարի տեսակը	Պայմանագրի / որոշման		Վճարման	
	անուն, ազգանունը / իրավաբանական անձի անվանումը	ՀՎՀՀ / անձը հաստատող փաստաթղթի համարը	գործունեության իրականացման վայրի հասցեն		N	ամսաթիվը	ամսաթիվը	գումարը (դրամ)

Ախուրյան համայնքի ղեկավար՝ Ա.Իգիթյան

Հավելված թիվ 1
ՀՀ Շիրակի մարզի
Ախուրյան համայնքի ավագանու
2020 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 116 որոշման

Ձև N 1

ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ

ՀՀ	Վճարողի			Տեղական տուրքի տեսակը	Շինության		Ծանուցման		Հայտի ներկայացման ամսաթիվը	Վճարման		Համայնքի ղեկավարի որոշման		Թույլտվության		
	անուն, ազգանունը / իրավաբանական անձի անվանումը	ՀՎՀՀ / անձը հաստատող փաստաթղթի համարը	գործունեության իրականացման վայրի հասցեն		տեսակը	մակերեսը	N	ամսաթիվը		ամսաթիվը	գումարը (դրամ)	N	ամսաթիվը	N	ամսաթիվը	ժամանակահատվածը

Ախուրյան համայնքի ղեկավար՝ Ա. Իգիթյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ. Ախուրյան, (0312) 70885 , 091 420 451 akhuryan.shirak@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

22 հոկտեմբերի 2020 թվականի թիվ 117

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 40-րդ կետի դրույթով՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է.

Սահմանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները՝ համաձայն հավելվածի:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԲՈՒՋՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ

ԴՐՄԵՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ գրավոր կարծիք 27.09.2020թ.

ՀԱՄԻԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՄԱԹՈՍՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄՆԱՑՅԱՆ ՄՀԵՐ

ՄՔՈՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԳԵՂԱՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ**

2020թ. հոկտեմբերի 22

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Ախուրյան համայնքի ավագանու
2020 թվականի սպտեմբերի 22-ի N 117 որոշման

ԿԱՆՈՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոններով կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների (այսուհետ՝ առևտրի և ծառայությունների) ոլորտում իրականացվող գործունեությունը:
2. Համայնքի տարածքում առևտրի և ծառայությունների ոլորտում իրականացվող գործունեությունը կանոնակարգվում է «Առևտրի և ծառայությունների մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, այլ իրավական ակտերով և սույն կանոններով:
3. Համայնքի տարածքում սույն կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարը:

II. ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

4. Համայնքի տարածքում առևտուրն իրականացվում է առևտրի օբյեկտներում՝ խանութներում, կրպակներում, տաղավարներում, հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում, ինչպես նաև առևտրի իրականացման վայրերում՝ առևտրի կենտրոններում, սպառողական ապրանքների շուկաներում, գյուղատնտեսական արտադրանքի շուկաներում, կենդանիների շուկաներում, տոնավաճառներում (վերնիսաժներում) և ցուցահանդես-վաճառքի անցկացման վայրերում, բացօթյա առևտրի վայրերում, շրջիկ առևտրի կետերում:
5. Առևտրի օբյեկտներում սննդամթերքի և ոչ պարենային ապրանքների, ինչպես նաև գյուղատնտեսական արտադրանքի վաճառքը պետք է կատարվի ըստ ապրանքախմբերի առանձին բաժիններում:
6. Ելնելով տվյալ առևտրի օբյեկտի առանձնահատկություններից առևտրի օբյեկտը պետք է ապահովված լինի օրենքով թույլատրված ապրանքների վաճառքը կազմակերպելու համար օրենսդրությանը համապատասխան ընդունման, պահման և վաճառքի պայմաններն ապահովող սարքավորումներով և առևտրատեխնոլոգիական պարագաներով, պահեստային, վարչակենցաղային, ապրանքների վաճառքի նախապատրաստման համար անհրաժեշտ տարածքներով:

7. Առևտրի օբյեկտը պետք է ապահովված լինի Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պահանջները բավարարող ցուցանակով:
8. Առևտրի օբյեկտներում սգո ծիսակատարություններին վերաբերող ապրանքների նմուշների ցուցադրումն առևտրի օբյեկտից դուրս արգելվում է: Նշված ապրանքներ վաճառող առևտրի օբյեկտների ցուցափեղկերը և մուտքերը պարտադիր պետք է լինեն վարագուրապատված՝ այնպես, որ վաճառող ապրանքների նմուշները տեսանելի չլինեն:
9. Հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերը պետք է ապահովված լինեն օրենսդրությանը համապատասխան կառուցված վճարովի կամ անվճար հասարակական զուգարաններով և դրանց առկայության մասին տեղեկացնող, ինչպես նաև գտնվելու տեղի վերաբերյալ նշում պարունակող մուտքի մոտակայքում տեղակայված ցուցանակով:
10. Առևտրի իրականացման վայրի կազմակերպիչը պարտավոր է վաճառողներին (բացառությամբ առևտրի իրականացման վայրի տարածքում գործող առևտրի, հանրային սննդի օբյեկտների վաճառողների) ապահովել օրենսդրությանը համապատասխան առևտրատեխնոլոգիական սարքավորումներով, ինչպես նաև տվյալ առևտրական գործունեություն իրականացնելու համար նախատեսված այլ գույքով:

III. ԱՌԵՎՏՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

11. Առևտրի օբյեկտներում պետք է բացառվի պիտանիելության ժամկետն անցած ապրանքների առկայությունը վաճառքում:
12. Առևտրի վայրի աշխատողը ապրանքը վաճառքի հանելուց առաջ պարտավոր է ստուգել ապրանքի որակն ըստ արտաքին հատկանիշների, դրանց պիտակների և գնապիտակների առկայությունը, իրազեկ լինել վաճառվող ապրանքների բնութագրական հատկություններին և անհրաժեշտության դեպքում սպառողին տալ ստույգ և հավաստի տեղեկություններ:
13. Վաճառողը պարտավոր է ապահովել սննդամթերքի վաճառքով զբաղվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների աշխատողներին աշխատանքային արտահագուստի կրումը:
14. Սպառողի (գնորդի) կողմից գնված պատշաճ և ոչ պատշաճ ապրանքների փոխարինումը կամ դրանց համար վճարված գումարի վերադարձումը և վերահաշվարկն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
15. Սպառողական ապրանքների, գյուղատնտեսական արտադրանքի և կենդանիների շուկաներում, տոնավաճառներում և ցուցահանդես-վաճառքի կազմակերպման վայրերում վաճառվող ապրանքների համար գնապիտակի առկայությունը պարտադիր չէ (բացառությամբ նշված վայրերում գործող առևտրի օբյեկտների):
16. Տոնավաճառները (վերնիսաժները) կազմակերպում են տեղական ինքնակառավարման մարմինները, օրենսդրությամբ սահմանված կարգով, միայն շաբաթ, կիրակի և օրենքով սահմանված տոնական օրերին:
17. Համայնքի տարածքում դեղերի վաճառքն իրականացվում է դեղատների միջոցով: Գնորդին վաճառված պատշաճ որակի դեղերը ենթակա չեն փոխարինման կամ վերադարձման:

18. Վաճառողի կողմից սննդամթերքի կշռափաթեթավորում կատարելիս, ելնելով տվյալ ապրանքատեսակի առանձնահատկությունից, փաթեթավորման համար օգտագործվում են հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության կողմից թույլատրված նյութերից պատրաստված փաթեթավորման միջոցներ: Փաթեթավորվող սննդամթերքի փաթեթի կամ մեջդիր պիտակների վրա նշվում են ապրանքի անվանումը, տեսակը, քաշը, մեկ կիլոգրամի արժեքը և կշռափաթեթավորված քաշի վաճառքի գինը, փաթեթավորման օրը, նաև պիտանիելության ժամկետը:
19. Ապրանքների վաճառքը սպառողների (գնորդների) պատվերներով կարող է իրականացվել առևտրի օբյեկտներից: Վաճառողը պարտավոր է սպառողներին (գնորդների) ապահովել մատուցվող ծառայությունների ցանկի, պատվերների ընդունման և ապրանքների հանձնման ժամկետի, վաճառվող ապրանքների տեսականու և գների վերաբերյալ մատչելի և ստույգ տեղեկատվությամբ:
20. Հացի և հացաբուլկեղենի մանրածախ առևտուրն իրականացվում է հացի և հացաբուլկեղենի մասնագիտացված խանութներում, առանձնացված տաղավարներում և կրպակներում, սննդամթերքի մասնագիտացված խանութների առանձնացված բաժիններում, սպառողական ապրանքների և գյուղատնտեսական ապրանքների շուկաների տարածքում գտնվող առանձնացված առևտրի օբյեկտներում, իսկ մանր կշռափաթեթավորված հատային ապրանքները՝ նաև շրջիկ առևտրի կետերի միջոցով:
21. Ոգելից խմիչքների և ծխախոտի առևտուրն իրականացվում է միայն համայնքի ղեկավարի թույլտվության դեպքում: Ուսումնական հաստատությունների, մանկական և բուժկանխարգելիչ կազմակերպությունների առևտրի կետերում ոգելից խմիչքների վաճառք չի թույլատրվում:
22. Հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերից դուրս հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքն արգելվում է: Դրանց վաճառքը թույլատրվում է իրականացնել օրենսդրությամբ սահմանված տեխնիկական պահանջներին համապատասխանող սարքավորումներով և գործարանային արտադրության ավտոցիստեռներով:
23. Գյուղատնտեսական արտադրանքի շուկայի կազմակերպիչը վաճառքի ընդունվող՝ փորձաքննություն պահանջող գյուղատնտեսական արտադրանքի որակի ստուգման նպատակով ապահովում է գյուղատնտեսական արտադրանքի շուկայում համապատասխան սարքավորումներով հագեցված լաբորատորիա:
24. Արգելվում է առևտրի, հանրային սննդի օբյեկտներում, սպառողական ապրանքների, գյուղատնտեսական արտադրանքի, կենդանիների շուկաներում, կրպակներում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով արգելվող ապրանքներ վաճառելը (իրացնելը):
25. Արգելվում է 18 տարին չլրացած անձանց ծխախոտ, ալկոհոլային խմիչքներ, թմրամիջոցներ և հոգեմետ նյութեր, սարսափ կամ պոռնոգրաֆիա բովանդակող գրականություն և տեսաերիզներ վաճառելը:
26. Ցուցանակներում, ցուցափեղկերում, ինչպես նաև տեղեկատվության տրամադրման այլ միջոցներում և գովազդում արգելվում է օգտագործել այլ անձանց պատկանող և Հայաստանի Հանրապետությունում պահպանվող ապրանքային նշանը կամ ֆիրմային անվանումը, եթե այդպիսի օգտագործման համար առկա չէ դրանց սեփականատիրոջ կողմից օրենքով սահմանված կարգով տրված թույտվությունը:
27. Համայնքի տարածքում բացօթյա առևտուր կարող են իրականացնել միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան թույլտվություն ստացած իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը:

28. Թույլատրվում է միայն ծաղիկների, տնկիների, ամանորյա տոնակատարությունների համար նախատեսված եղևնիների և սոճիների, պաղպաղակի, ջրի, հանքային ջրի, հյութերի, զովացուցիչ ըմպելիքների բացօթյա առևտուրը: Վաճառարկղերը պետք է դրվեն տակդիրների վրա, արգելվում է վաճառարկղերը դնել անմիջապես գետնին, մայթին, սալահատակին:

IV. ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

29. Հանրային սնունդը՝ խոհարարական արտադրանքի պատրաստման, իրացման և սպառման կազմակերպումն է հատուկ կահավորված տարածքում:
30. Համայնքի տարածքում գործող հանրային սննդի օբյեկտների տեսակներն են՝ ճաշարանները, ռեստորանները, սրճարանները, բարերը, բուֆետները և խոհարարական արտադրանքի պատրաստման և իրացման այլ օբյեկտները:
31. Հանրային սննդի օբյեկտը պետք է ապահովված լինի տեխնոլոգիական գործընթացն ապահովող համապատասխան սարքավորումներով և հանրային սննդի գործունեությունն իրականացնելու համար նախատեսված գույքով:
32. Հանրային սննդի օբյեկտը պետք է ապահովված լինի Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պահանջները բավարարող ցուցանակով:
33. Հանրային սննդի օբյեկտի աշխատողներից՝ բարմենը, խոհարարը, հրուշակագործն ու մատուցողը պետք է ունենան անձնական սանիտարական գրքույկ, կրեն աշխատանքային հագուստ, պետք է ունենան համապատասխան մասնագիտական կրթություն, կամ մասնագիտական պատրաստվածության մասին դիպլոմ:
34. Սպառողներին սպասարկման ձևերն ու մեթոդները սահմանում է վաճառողը:
35. Վաճառողը պետք է ունենա ճաշացուցակ, որը ներկայացվում է սպառողին: Ճաշացուցակում նշվում է խոհարարական արտադրանքի զանգվածը և վերջինիս այն գինը, որն ենթակա է սպառողի կողմից վերջնական վճարման:
36. Մատուցողի ներկայացված հաշվում (որի երկրորդ օրինակը սահմանված կարգով մնում է վաճառողի մոտ) նշվում է նրա անուն ազգանունը, սպասարկման օրը, կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների, խմորեղենի, հացաբուլկեղենի, գնովի ապրանքների անվանումները, քանակը, զանգվածը և վճարման ենթակա ապրանքների վերջնական գինը:
37. Համայնքի տարածքում հանրային սննդի օբյեկտներում ոգելից խմիչքների և ծխախոտի իրացման թույլտվությունը տալիս է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարը:

IV. ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

38. Կենցաղային ծառայությունը սպառողների կենցաղային կարիքների բավարարման համար՝ նրանց պատվերով կատարողի կողմից մատուցվող ծառայություն է:
39. Կենցաղային ծառայության օբյեկտը պետք է ապահովված լինի Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պահանջները բավարարող ցուցանակով:

40. Կենցաղային ծառայության օբյեկտում՝ սպառողներին տեսանելի տեղում, փակցվում է մատուցվող ծառայությունների գնացուցակը:

41. Կենցաղային ծառայության օբյեկտներում ծառայությունների պատվերների ընդունման տեղը, ձևը որոշում է կատարողը:
42. Օրենսդրությամբ սահմանված դեպքերում, առանձին կենցաղային ծառայությունների մասով, կենցաղային ծառայություններ մատուցող աշխատողը պարտավոր է ունենալ համապատասխան մասնագիտական կրթության կամ մասնագիտական պատրաստվածության մասին դիպլոմ կամ վկայական կամ առնվազն երկու տարվա համապատասխան աշխատանքային ստաժ:

VI. ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

43. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի կողմից առևտրի և ծառայությունների ոլորտում հսկողությունն իրականացվում է «Առևտրի և ծառայությունների մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքով վերապահված իրավասությունների շրջանակներում:
44. Համայնքի ղեկավարը հսկողությունն իրականացնում է համապատասխան աշխատակիցների (այսուհետ՝ տեսուչներ) միջոցով:
45. Հսկողության իրականացումն սկսելու համար հիմք է հանդիսանում համայնքի ղեկավարի հանձնարարագիրը:
46. Համայնքի ղեկավարի հանձնարարագրի համար հիմք են հանդիսանում օրենքով վերապահված լիազորությունների իրականացումը և քաղաքացիներից (սպառողներից) ստացված առաջարկություններն ու առարկությունները:
47. Հսկողություն իրականացնելու մասին համայնքի ղեկավարի հանձնարարագրում նշվում են հսկողություն իրականացնող մարմնի անվանումը, տեսուչների անունը, ազգանունը, հսկողություն իրականացնելու ենթակա տնտեսավարող սուբյեկտի լրիվ անվանումը: Հանձնարարագրով չամրագրված տեսուչները իրավունք չունեն մասնակցելու հսկողության իրականացմանը:
48. Տնտեսավարող սուբյեկտի մոտ մեկ հսկողության ժամկետը կարող է սահմանվել ոչ ավելի, քան մեկ աշխատանքային օր, ընդ որում, հսկողության փաստացի սկսելու օր է համարվում հսկողություն իրականացվող օբյեկտում պահվող հսկողության մատյանում գրառում կատարելու օրը:
49. Տեսուչներն ունեն «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իրավունքներ և պարտավորություններ:
50. Տնտեսավարող սուբյեկտի կողմից «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պահանջների խախտման դեպքում տեսուչները հատուկ համարակալված պաշտոնաթերթերի վրա կազմում են արձանագրություն (հավելված թիվ 2) երկու օրինակից, իսկ խախտումներ և թերություններ չհայտնաբերելու դեպքում՝ տեղեկանք:

51. Կազմված արձանագրությունը կամ տեղեկանքը հսկողություն իրականացնող տեսուչները երկու օրվա ընթացքում ներկայացնում են տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին: Կազմված արձանագրությունը ստորագրում են տեսուչները, տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը: Տարաձայնությունների դեպքում ստորագրողների կարծիքները նշվում են արձանագրությունում: Արձանագրությունը ստորագրելուց ստորագրողների հրաժարվելու դեպքում այդ մասին արձանագրությունում կատարվում է համապատասխան գրառում: Տնտեսավարող սուբյեկտի կողմից արձանագրությունը ստորագրելու և տարաձայնություններ ներկայացնելու ժամկետը չի կարող գերազանցել երկու աշխատանքային օրը: Արձանագրության պատճենի մեկ օրինակը հանձնվում է տնտեսավարող սուբյեկտին:
52. Հսկողության իրականացման արդյունքներով արձանագրված իրավախախտումների վերաբերյալ գործերի քննությունը կատարվում է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքով սահմանված կարգով:
53. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարը համայնքի տարածքում առևտրի և ծառայությունների ոլորտում իրականացվող հսկողության մասով հաշվետու է Շիրակի մարզպետին: Հսկողության արդյունքների մասին ներկայացվում է եռամսյակային հաշվետվություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

_____

(թույլտվություն տրամադրող համայնքի անվանումը)

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ

N _____

Տրված ____ _____ 20____թ.

_____

_____

_____

Հայտատու անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը և գտնվելու վայրը կամ իրավաբանական անձի լրիվ անվանումը, կազմակերպա-իրավական ձևը և գտնվելու վայրը, հարկ վճարողի հաշվառման համարը

Գործունեության տեսակի իրականացման վայրը, շինության տեսակը

Թույլտվության գործողության ժամկետը _____ _____ 20 _____թ.

_____ մինչև _____ _____ 20 _____թ.:

_____
(ստորագրություն)

Կ.Տ.

Ձև N2

ՀԱՅՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ

1.Իրավաբանական անձի (կազմակերպության) անվանումը և կազմակերպական իրավական ձևը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, հարկ վճարողի հաշվառման համարը

_____

_____

2.Կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ գտնվելու վայրը _____

_____

3.Գործունեության տեսակի իրականացման վայրը, շինության տեսակը, հեռախոսահամարը, կապի այլ միջոցներ

_____

_____

4. Գործունեության անվանումը

_____

_____

_____

5.Թույլտվության ժամկետը

_____

_____

(նշել թույլտվության պահանջվելիք ժամկետը)

Ներկայացված տեղեկությունների իսկությունը հաստատում եմ:

(կազմակերպության պատասխանատու անձի անունը, հայրանունը, ազգանունը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը,հայրանունը,ազգանունը)

___ _____20_____թ._

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ

"_____ 20__թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԵՎՏՐԻ, ՀԱՆՐԱՅԻՆ ՄՆՆԴԻ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

_____

(հսկողություն իրականացնողների պաշտոնը, անունը, ազգանունը)

Համաձայն _____

(համայնքի ղեկավարի անունը, ազգանունը)

20__թվականի _____ N____-ի հանձնարարականի /կարգադրության/

20__թվականի _____ ին իրականացվեց հսկողություն

_____

(կազմակերպության, անհատ ձեռնարկատիրոջ անվանումը,

_____

գտնվելու վայրը, հեռախոսի համարը)

_____

(քաղաք, փողոց, տուն, բնակարան)

_____

(մասնակիցների պաշտոնը, անունը, ազգանունը)

Կազմակերպությունը (անհատ ձեռնարկատերը) գրանցված է _____ թվական _____"-ին գրանցման վկայական _____

Կազմակերպությունում (անհատ ձեռնարկատիրոջ մոտ) նախորդ հսկողությունն իրականացվել է _____

_____

(ում կողմից, հսկողության իրականացման թվականը

_____

արձանագրված թերությունները վերացվել են, թե՝ ոչ)

ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԵՑ

1. Պիտանիության ժամկետն անցած ապրանքների առկայությունը վաճառքում՝

_____

_____

2. Օրենսդրությամբ սահմանված պահանջներին բավարարող ցուցանակի առկայությունը և աշխատանքային ռեժիմի պահպանումը՝

_____

_____

3. Առևտրի օբյեկտը օրենքով վաճառքի թույլատրված ապրանքների համար օրենսդրությանը համապատասխան՝ ընդունման, պահման և վաճառքի պայմաններն ապահովող սարքավորումներով և առևտրատեխնոլոգիական պարագաներով, պահեստային, վարչակենցաղային, ապրանքների վաճառքի համար անհրաժեշտ շենքերով ապահովումը՝

_____

_____

4. Հանրային սննդի օբյեկտը տեխնոլոգիական գործընթացն ապահովող համապատասխան սարքավորումներով, տվյալ հանրային սննդի գործունեությունն իրականացնելու համար նախատեսված գույքով ապահովումը՝

_____

_____

5. Առևտրի օբյեկտից դուրս սգո ծիսակատարություններին վերաբերող ապրանքների նմուշների ցուցադրումը՝

_____

_____

6. Հանրային սննդի օբյեկտներում, օրենքով սահմանված դեպքերում, առանց համապատասխան մասնագիտական կրթության կամ մասնագիտական պատրաստվածության մասին դիպլոմի կամ վկայականի աշխատողների առկայությունը՝

_____

_____

7. Կենցաղային ծառայության օբյեկտներում, օրենքով սահմանված դեպքերում, առանց համապատասխան մասնագիտական կրթության կամ մասնագիտական պատրաստվածության մասին դիպլոմի կամ վկայականի, առանց առնվազն երկու տարվա համապատասխան աշխատանքային ստաժի աշխատողների առկայությունը՝

_____

_____

8. Պաշտոնատար անձի կողմից սննդամթերքի վաճառքով զբաղվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների աշխատողներին աշխատանքային արտահագուստ կրելու ապահովումը՝

_____

_____

9. Գյուղատնտեսական արտադրանքի շուկաներում փորձաքննություն պահանջող գյուղատնտեսական արտադրանքի որակի ստուգման նպատակով համապատասխան սարքավորումներով հագեցված լաբորատորիայով ապահովումը՝

_____

_____

10. Առևտրի, հանրային սննդի օբյեկտներում, սպառողական ապրանքների գյուղատնտեսական արտադրանքի, կենդանիների շուկաներում, կրպակներում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով արգելվող ապրանքների վաճառքի իրացման առկայությունը՝

_____

_____

11. Առևտրի օբյեկտներում սննդամթերքի, ոչ պարենային, գյուղատնտեսական արտադրանքի վաճառքը ըստ ապրանքախմբերի առանձին բաժիններում, իսկ առևտրի իրականացման վայրերում սննդամթերքի, ոչ պարենային ապրանքների, գյուղատնտեսական արտադրանքի վաճառքը ըստ ապրանքախմբերի տարանջատված մեկուսամասերում ապահովումը՝

_____

_____

12. Դեղատներում գնորդին սպառողին վաճառված պատշաճ որակի դեղերը փոխարինելու և կամ հետ վերցնելու առկայությունը՝

_____

_____

13. 18 տարին չլրացած անձանց ծխախոտ, ալկոհոլային խմիչքներ, թմրամիջոցներ և հոգեմետ նյութեր, սարսափ կամ պոռնոգրաֆիա բովանդակող գրականություն և տեսաերիզներ վաճառելը՝

_____

_____

14. Ոչ սահմանված տեղերում առևտուր անելու փաստերի առկայությունը՝

_____

_____

15. Առանց թույլտվության ոգելից խմիչքների և կամ ծխախոտի արտադրանքի վաճառքի իրականացումը՝

_____

_____

16. Հանրային սննդի օբյեկտները, բաղնիքները սաունաները, զվարճանքի, շահումով խաղեր կազմակերպող օբյեկտներն առանց թույլտվության ժամը 24.00-ից հետո աշխատելը՝

_____

_____

17. Առանց թույլտվության տոնավաճառներ, վերնիսաժներ կազմակերպելը՝

_____

_____

18. Հավելված՝ _____

1. _____
2. _____
3. _____

Արձանագրությունը բաղկացած է ___ էջից ___ օրինակից և ուղարկված է հանձնված է՝

1. _____
2. _____

Հսկողություն իրականացնող՝

1._____

2._____

Անհատ ձեռնարկատիրոջ ներկայացուցիչներ՝

1. _____

2. _____

Ծանոթություն.

1. Ստացա արձանագրության մեկ օրինակը՝

_____

պաշտոնը, անունը, ազգանունը, ստորագրությունը

2. Արձանագրության վերաբերյալ ունեմ առարկություն, որի համար ներկայացնում եմ բացատրություն

_____

պաշտոնը, անունը, ազգանունը, ստորագրությունը

3. Հրաժարվում եմ ստանալ արձանագրության օրինակը

_____

պաշտոնը, անունը, ազգանունը, ստորագրությունը

4. Արձանագրության պատճենն ուղարկվում է փոստով «____» « _____» 20___ թվական «____» « _____» 20___ թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԻԳԻԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ. Ախուրյան, (0312) 70885 , 091 420 451 akhuryan.shirak@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

22 հոկտեմբերի 2020 թվականի թիվ 118

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՐԱՎԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՎԱՅՐԵՐԸ, ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41.1-րդ կետի, «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» օրենքի 4-րդ հոդվածի դրույթներով՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է.

Սահմանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության իրականացման թույլատրելի վայրերը, պահանջներն ու պայմանները.

1. Տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն թույլատրվում է իրականացնել Ախուրյան համայնքի կենտրոնի և թվով 7 բնակավայրերի հուշահամալիր-պանթեոններում, հրապարակներում, զբոսայգիներում, համապատասխան տարածք ունեցող ռեստորաններում:
2. Տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություններ իրականացնելը պահանջում է հատուկ գիտելիքներ և հմտություն, կատարողների /օգտագործողների/ համապատասխան որակավորում և /կամ/ տեխնիկական սարքավորումների որոշակի պայմանների ապահովում:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԲՈՒՋՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ

ԴՐՄԵՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ կողմակցվել է 27.09.2020թ

ՀԱՄԻԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՄԱԹՈՍՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄՆԱՑՅԱՆ ՄՀԵՐ

ՄՔՈՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԳԵՂԱՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ**

2020թ. հոկտեմբերի 22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ. Ախուրյան, (0312) 70885 , 091 420 451 akhuryan.shirak@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

22 հոկտեմբերի 2020 թվականի թիվ 119

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԼՌՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԱՆԴՈՐՐՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԺԱՄԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 40.1-րդ կետի դրույթով՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է.

Սահմանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի վարչական տարածքում առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող անձանց կողմից լռությունը կամ գիշերային անդորրն ապահովելու ժամերը.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի կենտրոնի և թվով 7 բնակավայրերի բնակելի գոտում գործունեություն իրականացնող օբյեկտների համար՝ ժամը 23.00-ից մինչև 7.00-ն:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի կենտրոնի և թվով 7 բնակավայրերի բնակելի գոտուց դուրս գտնվող տարածքներում գործունեություն իրականացնող օբյեկտների համար՝ ժամը 24.00-ից մինչև 7.00-ն:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԲՈՒՋՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ

ԴՐՄԵՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ կգտնվեմ ՝ 27.09.2020թ

ՀԱՄԻԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՄԱԹՈՍՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄՆԱՑՅԱՆ ՄՀԵՐ

ՄՔՈՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԳԵՂԱՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ**

2020թ. հոկտեմբերի 22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
РА ШИРАКСКАЯ ОБЛАСТЬ МУНИЦИПАЛИТЕТ АХУРЯН
RA SHIRAK REGION AKHURYAN MUNICIPALITY

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ. Ախուրյան, (0312) 70885 , 091 420 451 akhuryan.shirak@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

22 հոկտեմբերի 2020 թվականի թիվ 120

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՆՐԻ ՏԵՂԱԿԱՅՄԱՆԸ (ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆԸ) ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41.2-րդ կետի, «Առևտրի և ծառայությաությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15.3-րդ հդվածի 3-րդ մասի դրույթներով՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի վարչական տարածքում արգելել սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների տեղակայումը բազմաբնակարան շենքի բնակելի և (կամ) ոչ բնակելի տարածքում, ինչպես նաև կրթական և պատմամշակութային հաստատությունների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի, բժշկական հաստատությունների տարածքներում:

2. .«Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15.2-րդ հոդվածով սահմանված սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտները կարող են գտնվել ուսումնական, կրթական, մշակութային, առողջապահական, մարզական և սոցիալական կազմակերպություններից, հիմնարկներից, հաստատություններից, բազմաբնակարան շենքերից, անհատական բնակելի տներից, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կամ դրանց ներկայացուցչությունների վարչական շենքերից, զբոսայգիներից, այգիներից, պուրակներից, հանգստի կամ ժամանցի համար նախատեսված այլ վայրերից նվազագույնը 50 մետր հեռավորության վրա:

3.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի վարչական տաչածքում անհատական բնակելի տների և համայնքի վարչական տարածքում գտնվող սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների միջև սույն որոշման 2-րդ կետով սահմանված հեռավորությունը կարող է սահմանվելլ անհատական բնակելի տների սեփականատերերի գրավոր համաձայնության առկայության դեպքում:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԲՈՒՋՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ

ԴՐՄԵՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ Կողմ/դեմ է 27.03.2020թ

ՀԱՄԻԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՄԱԹՈՍՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄՆԱՑՅԱՆ ՄՀԵՐ

ՄՔՈՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԳԵՂԱՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ**

2020թ. հունվարի 22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ. Ախուրյան, (0312) 70885 , 091 420 451 akhuryan.shirak@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

22 հոկտեմբերի 2020 թվականի թիվ 121

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ /ՏԵՂԱԴՐՄԱՆ/ ԿԱՆՈՆՆԵՐՆ ՈՒ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐՆ ՀԱՍՏԱՏԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41-րդ կետի, «Գովազդի մասին» Հայաստանի Հանարպետության օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ պարբերության դրույթներով՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդի տեղաբաշխման /տեղադրման/ կանոնները՝ համաձայն հավելված 1-ի:
2. 2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդի տեղաբաշխման /տեղադրման/ չափորոշիչները՝ համաձայն հավելված 2-ի:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԲՈՒՋՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ

ԴՐՄԵՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ կողմից է 21.09.2020թ.

ՀԱՄԻԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՄԱԹՈՍՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄՆԱՑՅԱՆ ՄՀԵՐ

ՄՔՈՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԳԵՂԱՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ**

2020թ. հոկտեմբերի 22

ՀԱՎԵԼՎԱԾ N 1
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 121 ՈՐՈՇՄԱՆ

ԿԱՆՈՆՆԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ (ՏԵՂԱԴՐՄԱՆ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

2. Սույն կանոններով (այսուհետ՝ Կանոններ) սահմանվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդի (այսուհետ՝ գովազդ) տեղադրելու կարգն ու պայմանները: Կանոնները ընդունվել են «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:
3. Արտաքին գովազդը (այսուհետ՝ գովազդ) իրավաբանական կամ ֆիզիկական անձանց, ապրանքների, գաղափարների կամ նախաձեռնությունների մասին տեղեկությունների տարածումն է բնակավայրերում գովազդի միջոցներով (վահանակների, գրաժապավենների, լուսատախտակների, պլակատների, ազդագրերի, հայտարարությունների և այլն) անորոշ թվով անձանց շրջանում և կոչված է ձևավորելու կամ պահպանելու հետաքրքրությունը տվյալ ֆիզիկական և իրավաբանական անձի, ապրանքների կամ նախաձեռնությունների նկատմամբ: Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մարտի 19-ի N 270 որոշման պահանջներին համապատասխան տեղադրվող ցուցանակների վրա զետեղվող տեղեկատվությունը արտաքին գովազդ չի համարվում: Արտաքին գովազդ չեն համարվում « Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի տարածքում արտաքին գովազդի տեղադրման չափորոշիչներով» (այսուհետ՝ Չափորոշիչներ) սահմանված մակերեսից ավելի մակերեսով տեղադրվող ֆիրմային նշանները և գովազդվող ապրանքանշանները:
4. Կանոնները տարածվում են բոլոր այն տարածքների վրա, որտեղ պետք է տեղադրվի արտաքին գովազդը:
5. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա գովազդի միջոց տեղադրելու համար Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի որոշմամբ հողամասը օգտագործման իրավունքով հանձնվում է դիմում ներկայացրած գովազդատուին (գովազդակրին)՝ միաժամանակ կնքելով հողօգտագործման համապատասխան պայմանագիր, հետագայում տվյալ կողմի հետ նախապատվության իրավունքով երկարացնելու պայմանով:
6. Գովազդի տեղադրումը թույլատրվում է, եթե այն համապատասխանում է «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Չափորոշիչների և Կանոնների պահանջներին:

2. ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7. Թույլտվությունը (հետագայում՝ թույլտվություն) «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն և Կանոններով սահմանված կարգով տրվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի կողմից:
8. Գովազդային միջոց տեղադրելու համար գովազդատուն (գովազդակիրը) հայտ է ներկայացնում Ախուրյան համայնքի ղեկավարին ՝ նշելով իր անունը, գտնվելու վայրը,գովազդի տեղադրման վայրը և ժամկետը, ինչպես նաև հարցի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքները: Հայտին կցվում է համապատասխան պատկերով ր գրառումներով գովազդի միջոցի էսքիզը, որտեղ նշվում են գովազդի արտաքին

չափերը, գովազդի տեղադրման ձևը(վահանակ, գրաժապավեն, լուսատախտակ, պլակատներ և այլն) և տեխնիկական լուծումները:

9. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանը գովազդի միջոց տեղադրելու համար գովազդատուից (գովազդակրից) հայտը և անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո պարզում է գովազդային միջոցի համապատասխանությունը Չափորոշիչների և Կանոնների պահանջներին (եթե այն թերի է, հետ է վերադարձվում թերությունը վերացնելու և նորից 15-օրյա ժամկետում ներկայացնելու համար), և 15 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի որոշմամբ տրվում է գովազդի տեղադրման թույլտվություն, որում նշվում են գովազդատուի (գովազդակրի) անվանումը, գովազդի չափերը, տեղադրման ձևը, գովազդային նյութերի անվանումը, թույլտվության գործողության ժամկետը:
10. Նույն հասցեում գովազդ տեղադրելու համար մեկից ավելի գովազդատուների (գովազդակիրների) հայտերի առկայության դեպքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարը «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն հայտարարում և անց է կացնում մրցույթ, որի արդյունքներով մրցույթի հաղթողին տրվում է գովազդի տեղադրման թույլտվություն:
11. Թույլտվությունը հանդիսանում է հաշվառման փաստաթուղթ, որը գրանցվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարան թույլտվությունների հաշվառման մատյանում, իսկ թույլտվության պատճենը և հաշվառման մատյանը պահվում են համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան համայնքային ծառայողի մոտ:
12. Գովազդի միջոցի տեղադրման վերաբերյալ գովազդատուի (գովազդակրի), հայտը 15-օրյա ժամկետում կարող է մերժվել այն դեպքում, եթե՝
    1) Ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում Չափորոշիչների և Կանոնների պահանջներին,
    2) Խախտվում են «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտերի պահանջները,
    3) Գովազդի միջոցի տեղադրմամբ խոչընդոտվում է ճանապարհային երթևեկությունը կամ քաղաքացիների անցուդարձը, խախտվում են անձանց օրենքով պաշտպանված իրավունքներն ու շահերը:
13. Գովազդային միջոց տեղադրելու հայտը մերժելու վերաբերյալ որոշման մեջ պետք է հստակ նշվեն մերժման պատճառներն ու հիմքերը:
14. Գովազդային նյութերը գովազդային միջոցների վրա տեղադրելու ժամանակ, ինչպես նաև արդեն տեղադրված գովազդվող տեղեկատվության փոփոխման դեպքում, գովազդատուն (գովազդակիրը) մինչև գովազդային նյութերի տեղադրումը կամ արդեն տեղադրված գովազդվող տեղեկատվության փոփոխումը, այդ մասին գրավոր տեղեկացնում է Ախուրյանի համայնքապետարանին՝ կից ներկայացնելով համապատասխան պատկերով և գրառումներով գովազդի էսքիզը, որտեղ նշվում են նաև գովազդի արտաքին չափերը: Գովազդի էսքիզը համաձայնեցվում է Ախուրյան համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան մասնագետի հետ:
15. Գովազդը պետք է համապատասխանի «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Չափորոշիչների ,Կանոնների և ՀՀ այլ իրավական ակտերի պահանջներին:
16. Գովազդի տեղադրման միջոցի մոնտաժային աշխատանքները կատարվում են հայտատուի պատվերով՝մասնագիտացված կազմակերպությունների կողմից մշակված և Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան հարցերով զբաղվող մասնագետի հետ համաձայնեցված նախագծով: Արտաքին գովազդի միջոց տեղադրելու համար գովազդակիրն օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում գովազդի տեղադրման միջոցի մոնտաժման ապահովության և դրա անվթար շահագործման համար:
17. Գովազդատուն (գովազդակիրը) իրավասու չէ արտաքին գովազդի տեղադրման համար իրեն տրված թույլտվությունը փոխանցել կամ օտարել այլ անձի:
18. Գովազդի տեղադրման թույլտվության ժամկետը լրանալու կամ երկարացնելու, պայմանագրով նախատեսված հիմքերով այն վաղաժամ դադարելու (լուծելու) դեպքում գովազդատուն (գովազդակիրը) պարտավոր է ողջամիտ ժամկետում իր միջոցներով ապամոնտաժել գովազդը և դրա տեղադրման միջոցները, իսկ զբաղեցրած տարածքը բերել նախկին վիճակին:

19. Կանոններով նախատեսված պարտավորությունը գովազդատուի (գովազդակրի) կողմից չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Ախուրյան համայնքի ղեկավարի որոշման համաձայն գովազդի (գովազդային միջոցի) ապամոնտաժումն իրականացվում է Ախուրյանի համայնքապետարանի կողմից՝ օրենքով սահմանված կարգով գովազդատուից (գովազդակրից) ստանալով համապատասխան փոխհատուցում:

3. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐԻ ՄՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

20. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքի դրույքաչափերը սահմանում է «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:
21. Այն դեպքում, երբ թույլտվության և պայմանագրի գործողության ընթացքում գովազդվող տեղեկատվությունը փոփոխվում է, որի համար օրենքով նախատեսված է տեղական տուրքի այլ դրույքաչափ, գովազդատուն (գովազդակիրը) վճարումը կատարում է «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու կողմից հաստատված համապատասխան դրույքաչափերով:
22. Հողօգտագործման վճարի չափը չի կարող պակաս լինել տվյալ հողի հարկի դրույքաչափից:
23. Կանոններին համապատասխան վճարված գումարներն ուղղվում են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի բյուջե:
24. Գովազդատուի (գովազդակրի) կողմից անբարեխիղճ գովազդ թույլ տալու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարը գովազդի մասին օրենսդրության խախտման դադարեցման և հակագովազդի իրականացման վերաբերյալ գրավոր նախազգուշացնում է գովազդատուին (գովազդակրին):
25. Գովազդատուները (գովազդակիրները) իրավասու են օրենքով սահմանված կարգով դատական կարգով բողոքարկել գովազդի տեղադրման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի որոշումներն ու գործողությունները:
26. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքում արտաքին գովազդի տեղադրման գործընթացի նկատմամբ հսկողությունն օրենքով սահմանված կարգով և գովազդի մասին օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողությունը իրականացնում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարը:
27. Գովազդային օրենսդրության պահանջների խախտումը առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԻԳԻԹՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ N 1
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 121 ՈՐՈՇՄԱՆ

ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ (ՏԵՂԱԴՐՄԱՆ)

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի տարածքում արտաքին գովազդի տեղաբաշխման (տեղադրման) չափորոշիչները (այսուհետ՝ Չափորոշիչներ) մշակվել են «Գովազդի մասին» ՀՀ օրենքի, « Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի տարածքում արտաքին գովազդի տեղաբաշխման (տեղադրման) համաքաղաքային կանոնների» (այսուհետ՝ Կանոններ) համապատասխան:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի տարածքում արտաքին գովազդի միջոցների (այսուհետ՝ գովազդ) տեղաբաշխումը (տեղադրումը) թույլատրվում է Կանոնների և Չափորոշիչների պահանջներին համապատասխան:

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

1. Արտաքին գովազդի միջոց են համարվում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի տարածքում տեղադրվող գովազդային տեղեկատու կրողները՝ անկախ շենքերի, շինությունների և հողամասերի սեփականության ձևից: Դրանց թվում են՝ վահանակային կայանքները(վահանակները), տանիքային կայանքները, մեծանկարները(պաննո), էլեկտրոնային էկրանները, ցուցանակները, բարձակները, ցուցատախտակները, շենքերի մուտքերի և պատուհանների հովհարները (մարկիզ), գրաժապավենները (տրանսպարանտ) և այլն:

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. Գովազդի տեղադրմանը ներկայացվող պահանջները՝

1.1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի տարածքում գովազդը և դրանց առանձին մասերը չեն կարող տեղադրվել երթևեկելի մասի մակերևույթից 6մ-ից ցածր բարձրությամբ եզրաքար չունեցող ճանապարհի կողքին:

1.2. Գովազդի միջոցները չպետք է՝
- խոչընդոտեն ճանապարհային երթևեկության ապահովմանն ու անվտանգությանը, փողոցների ու մայթերի անցմանը,
- սահմանափակեն տեսանելիությունը ավտոճանապարհների վրա,
- առաջացնեն երթևեկության մասնակիցների կուրացում (լույսով, այդ թվում՝ նաև անդրադարձող),
- հանդիսանան հետիոտնի շարժմանը արգելք,
- լինեն ճանապարհների վտանգավոր հատվածներում և տեղադրվեն լուսամփոփների ու ճանապարհային կանգնակների վրա:

1.3. Գովազդի տեղադրումը տրանսպորտային միջոցների վրա չպետք է հակասի ՀՀ կառավարության 2005թ. նոյեմբերի 24-ի N2137-Ն որոշման պահանջին:

1.4. Գովազդ տեղադրել չի թույլատրվում՝
- բնակելի շենքերի մոտ, եթե դրանք հանդիսանում են աղմուկի, տատանման, հզոր ճառագայթման և էլեկտրամագնիսական դաշտի աղբյուր,
- ճարտարապետական հուշարձանների վրա, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների շենքերի վրա և դրանց տարածում,
- ճանապարհային ցանցում, երբ այն անհամապատասխանում է ճանապարհատրանսպորտային տվյալ իրավիճակի հետ և նմանություն ունի (արտաքին

տեսքով, պատկերով և ձայնային էֆեկտով) ճանապարհային նշանների, ճանապարհային երթևեկության կազմակերպման և այլ տեխնիկական միջոցների հետ,

- փողոցների խաչմերուկների սահմաններից և դրանց մոտեցումներից 20մ-ից ոչ պակաս հեռավորության վրա:

2. Գովազդի՝ առանձին կանգնած մնայուն միջոցների տեսակները՝
Վահանակային կայանքները(վահանակները) տեղեկատվության համար մակերես նախատեսող կոնստրուկցիաներ են և բաղկացած են հիմքից, հիմնակմախքից(կարկաս) և տեղեկատու դաշտից.

2.1. Տեղեկատու դաշտի չափի տեսակներն են՝

- մեծ չափերի- 3մ*4մ.3մ*6մ և այլ չափերի,
- միջին չափերի- 1.8մ*1.2մ.2մ*3մ,
- փոքր չափերի- 0.6մ*0.9մ և ավելի փոքր չափերի.

2.2. Վահանակներին ներկայացվող պահանջներն են՝

- երկկողմանի կատարում,
- միակողմանի կատարում, որի դեպքում գովազդի հակառակ կողմը պարտադիր դեկորատիվ ձևավորում է,

2.3. Փողոցներում մեկ ուղղությամբ երկու հարևան վահանակների միջև եղած հեռավորությունը պետք է կազմի առնվազն՝

- 10 քմ—12 քմ՝ 50 մ—75 մ
- 6 քմ—10 քմ՝ 30 մ—50 մ
- 4 քմ—6 քմ՝ 20 մ—30 մ
- 2 քմ—4 քմ՝ 10 մ—20 մ
- Մինչև 2 քմ՝ 10 մ.

2.4. Մասնագիտական փորձաքննություն անցած և համաձայնեցված նախագծերի առկայության դեպքում կարող են օգտագործվել կոնստրուկցիաներ:

3. Շենքերի, շինությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի բարեկարգման տարրերի վրա տեղաբաշխվող (տեղադրվող) արտաքին գովազդի և տեղեկատվության մնայուն միջոցների տեսակները՝

3.1. Տանիքային կայանքները ծավալային կամ մակերեսային կոնստրուկցիաներ են, որոնք տեղադրվում են ամբողջովին կամ մասամբ՝ շենքի ճակատային մասում կամ տանիքին:

3.1.1. Տանիքային կայանքները բաղկացած են կոնստրուկցիայի կրող մասի ամրակցման տարրերից և տեղեկատու կայանքներից:

3.1.2. Ամրակցման տարրերը, ինչպես և կոնստրուկցիայի կրող մասի հակառակ կողմը պետք է ծածկվի դեկորատիվ պանելով:

3.1.3. Կոնստրուկցիաների միջոցով տանիքային կայանքի գովազդային վահանակի տեղադրումը պետք է համաձանեցվի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան աշխատակցի հետ:

3.2. Պատի մեծանկարներ (պաննո) կոչվում են արտաքին գովազդի այն միջոցները, որոնք տեղադրվում են շինությունների պատերին հետևյալ ձևերով՝

3.2.1. Պատկեր (տեղեկատվական դաշտ), որն անմիջապես շերտածածկում է պատը: Պատկերի կոնստրուկցիան հավաքվում է ամրակցման տարրերից, հիմնակմախքից և տեղեկատու դաշտից:

3.2.2. Պատի մեծանկարների տեղեկատու դաշտի մակերեսը որոշվում է կոնստրուկցիայի կամ անմիջական չափերով:

3.3. Բարձակ (կոնսոլային կոնստրուկցիա) են կոչվում երկկողմանի հարթակային վահանակները, որոնք ամրակցվում են կայմասյուներին կամ շենքերի վրա: Համապատասխան թույլտվության դեպքում թույլատրվում է բարձակները տեղադրել քաղաքային լուսավորման և կոնտակտային ցանցերի կրող կոնստրուկցիաների վրա:

3.3.1. Շահագործման անվտանգության նպատակով բարձակները տեղադրվում են հողի մակերևույթից ոչ պակաս, քան 3մետր բարձրության վրա:

3.3.2. Հիմքերի վրա կանգնեցված բարձակները տեղադրվում են երթևեկելի մասից դուրս՝ մայթի կողմը: Արգելվում է մեկից ավելի բարձակների տեղադրումը մեկ հիմքի վրա:

3.3.3. Բարձակի տեղեկատու դաշտի մակերեսը հաշվարկվում է կողմերի ընդհանուր մակերեսով:

4. Էկրանավորող սարքավորումներն արտաքին գովազդի և տեղեկատվության միջոց են:

4.1. Դրանց կոնստրուկցիան ներառում է էկրանավորող (վերարտադրող) սարքավորման մակերես (էկրան) կամ տեղեկատու պատկեր:

4.2. Հարթ պատկերների համար նախատեսված տեղեկատու դաշտի մակերեսը որոշվում է էկրանավորող պատկերի մակերեսով:

5. Գովազդային վահանակների ներքևի եզրը պետք է տեղադրված լինի փողոցի մակերեսից 6մ-ից ոչ պակաս բարձրության վրա:

6. Հենասյան հիմքերը հողի ծածկույթում պետք է տեղադրվեն քաղաքաշինական նորմերին և շինարարական տեխնոլոգիաներին համապատասխան:

7. Չափորոշիչներում չնշված և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2002թվականի մարտի 19-ի հ. 270 որոշմամբ հաստատված ցանկում չընդգրկված 2.0 քառակուսի մետրից ավելի մակերեսով ֆիրմային նշանների և գովազդվող տարբեր ապրանքանշանների տեղադրումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան մասնագետի առաջարկությունների հիման վրա:

8. Տրանսպորտային միջոցների վրա գովազդի տեղադրումը.

8.1. Տրանսպորտային միջոցների վրա գովազդի տեղադրումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005թ. նոյեմբերի 24-ի N 2137-Ն որոշման պահանջներին համապատասխան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԻԳԻԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ. Ախուրյան, (0312) 70885 , 091 420 451 akhuryan.shirak@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

22 հոկտեմբերի 2020 թվականի թիվ 122

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԱԽՈՒՐՅԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի դրույթով, «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետի գ) ենթակետով՝
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի Ախուրյանի տարածքային բաժնի գրանցման կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԲՈՒՋՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ

ԴՐՄԵՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ կողմից 27.09.2020թ

ՀԱՄԻԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՄԱԹՈՍՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄՆԱՑՅԱՆ ՄՀԵՐ

ՄՔՈՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԳԵՂԱՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ**

2020թ. հոկտեմբերի 22

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 122 ՈՐՈՇՄԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԱԽՈՒՐՅԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ

1. Ընդհանուր դրույթներ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի (այսուհետ՝ համայնքապետարան) աշխատակազմի (այսուհետ՝ աշխատակազմ) քաղաքացիական կացության ակտերի գրանցման Ախուրյանի տարածքային բաժինը (այսուհետ՝ բաժին) աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում է, որը «Քաղաքացիական կացության ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն իրականացնում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործառույթներ:
2. Բաժինը ստեղծվում, վերակազմակերպվում և նրա գործունեությունը դադարեցվում է օրենքով սահմանված կարգով՝ համայնքի ավագանու որոշմամբ: Բաժինը գործում է իր կանոնադրության համաձայն, որը հաստատում է համայնքի ավագանին:
3. Բաժնի լիազորությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով և սույն կանոնադրությամբ:
4. Բաժինը իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և այլ իրավական ակտերին համապատասխան:
5. Բաժինն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և բաժնի հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր և անհատականացման այլ միջոցներ:

2. Բաժնի նպատակները և խնդիրները

6. Բաժնի նպատակները և խնդիրներն են՝
1) քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումների իրականացումը օրենքով սահմանված կարգով և ժամկետներում.
2) տարածքային բաժնի արխիվի վարումը.
3) կատարված քաղաքացիական կացության ակտերի գրանցումների վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկատվության տրամադրումը.
4) օրենքով նախատեսված այլ նպատակներ և խնդիրներ:

3. Բաժնի գործառույթները

7. Բաժինն իր նպատակների և խնդիրների իրականացման համար Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով իրականացնում է հետևյալ գործառույթները.
1) իրականացնում է քաղաքացիական կացության ակտերի հետևյալ պետական գրանցումները՝
ա) ծնունդ.
բ) ամուսնություն.
գ) ամուսնալուծություն.
դ) որդեգրում.
ե) հայրության ճանաչում.
զ) անվան, ազգանվան փոխում.
է) մահ.
2) իրականացնում է քաղաքացիական կացության ակտերի գրանցումներում ուղղումներ, լրացումներ կամ փոփոխություններ.
3) իրականացնում է քաղաքացիական կացության ակտերի գրանցումների վերականգնումը.
4) իրականացնում է օրենքով նախատեսված այլ գործառույթներ:

4. Բաժնի աշխատանքների կազմակերպումը և ղեկավարումը

8. Բաժնի գործունեությունը կազմակերպում է համայնքի ղեկավարը:
9. Բաժնի անմիջական ղեկավարումն իրականացնում է բաժնի պետը:
10. Քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման ճշտության և քաղաքացիական կացության ակտերի գրառումները կազմելու որակի համար պատասխանատու է բաժնի պետը:

11. Բաժնի պետը՝
1) իր գործունեության ընթացքում առաջնորդվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, համայնքի ղեկավարի աշխատակազմի կանոնադրությամբ, սույն կանոնադրությամբ, ինչպես նաև այլ իրավական ակտերով.
2) կազմակերպում է բաժնի աշխատանքները.
3) կազմակերպում է քաղաքացիական կացության ակտերի գրանցումների հետ կապված իրավական ակտերի կատարումը.
4) կատարում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումները.
5) իր իրավասության սահմաններում համագործակցում է պաշտոնատար այլ անձանց հետ.
6) իրականացնում է քաղաքացիների դիմում-բողոքների սահմանված կարգով քննարկումը.

7) քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումներ իրականացնելիս ստանում է օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված անհրաժեշտ տեղեկություններ և այլ նյութեր.
8) ուսումնասիրում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման համար տրված դիմումները, կայացնում համապատասխան որոշումներ, պարզաբանում դրանց բողոքարկման ժամկետները և կարգը.
9) համայնքի ղեկավարին և աշխատակազմի քարտուղարին ներկայացնում է բաժնի աշխատանքային ծրագրերը, անհրաժեշտության դեպքում, բաժնի լիզորությունների սահմաններում նախապատրաստում առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր, միջնորդագրեր և այլ գրություններ.
10) վարում է համապատասխան տարածքային բաժնի արխիվը.
11) իրականացնում է բաժնի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի, առաջարկությունների, եզրակացությունների և այլ փաստաթղթերի պահպանման և արխիվացման աշխատանքներ.
12) ստորագրում է իր և բաժնի անունից պատրաստվող փաստաթղթերը.
13) օրենքով սահմանված կարգով համապատասխան մարմիններին տրամադրում է տեղեկատվություն կատարված քաղաքացիական կացության ակտերի գրանցումների վերաբերյալ.
14) համայնքի ղեկավարին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնում է հաշվետվություն բաժնի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ.
15) պատասխանատվություն է կրում բաժնի առջև դրված խնդիրների լուծման համար.
16) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ գործառույթներ:

11. Բաժնի աշխատողը՝

1) բաժնի պետի հանձնարարությամբ կատարում է քաղաքացիական կացության ակտերի գրանցումներ, վկայականների, տեղեկանքների, ակտային պատճենների և այլ փաստաթղթերի տրամադրման գործավարություն.
2) իր լիազորությունների շրջանակներում վարում է բաժնի արխիվը.
3) կատարում է բաժնի պետի ցուցումները և հանձնարարականները.
4) բաժնի պետի հանձնարարությամբ իրականացնում է բաժնի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի, առաջարկությունների, եզրակացությունների և այլ փաստաթղթերի պահպանության և արխիվացման աշխատանքները.
5) իրականացնում է քաղաքացիների դիմում-բողոքների սահմանված կարգով քննարկումը և արդյունքները ներկայացնում է բաժնի պետին.
6) ստորագրում է իր կողմից պատրաստվող փաստաթղթերը.
7) բաժնի պետի հանձնարարությամբ իրականացնում է բաժնի փաստաթղթային սպասարկումը, ապահովում է փաստաթղթաշրջանառության վարման աշխատանքները.
8) բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է բաժնի աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին.

9) իր լիազորությունների շրջանակներում, ինչպես նաև բաժնի պետի հանձնարարությամբ, նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլ գրություններ.
10) իրականացնում է օրենքով և իրավական այլ ակտերով նախատեսված լիազորություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ. Ախուրյան, (0312) 70885 , 091 420 451 akhuryan.shirak@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

22 հոկտեմբերի 2020 թվականի թիվ 123

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 18 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ կետի 1-ին մասի 28-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի դրույթներով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Ախուրյան համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու, կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին»թիվ 18 որոշման հավելվածում կատարել լրացում՝ 2.4 կետց հետո ավելացնել 2.5 և 2.6 կետերը

2.5. Ոչ տարանցիկ ներհամայնքային ճանապարների խճապատում, հարթեցում, սալապատում, երթևեկելի մասի և մայթեր բարեկարգման աշխատանքներ
2.6. Ոռոգան և խմելու ջրի ջրագծերի անցկացման և վերանորոգման աշխատանքներ:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԲՈՒՋՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ

ԴՐՄԵՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ չգրաքվել է 27.09.2020թ

ՀԱՄԻԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՄԱԹՈՍՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄՆԱՑՅԱՆ ՄՀԵՐ

ՄՔՈՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԳԵՂԱՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ**

2020թ. հոկտեմբերի 22